

**Տեղեկատվական ամփոփագիր**

**«Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրով տրամադրվող վարկ»**

<b>Վարկի նպատակը</b>	Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգում (ԷԱ վերանորոգման օբյեկտ է հանդիսանում ՀՀ տարածքում գտնվող բազմաբնակարան շենքի բնակարանը կամ անհատական բնակելի տունը՝ բացառությամբ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող)
<b>Վարկի տրամադրման ռեսուրս</b>	«ԱՀԸ» ՎԿԿ ՓԲԸ-ի «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման կարգի» էներգաարդյունավետ վարկավորման և «Ջերմ օջախ էներգաարդյունավետ վերանորոգման միկրովարկերի վերաֆինանսավորման կարգի» շրջանակներում
<b>Վարկառու/համավարկառու/երաշխավոր</b>	<ul style="list-style-type: none"> <li>18-70 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, ովքեր ծրագրի իրականացման կարգն ուժի մեջ մտնելուց հետո իրենց բնակարանի(բնակելի տան) էներգաարդյունավետ վերանորոգման համար ֆինանսական կառույցներից ներգրավել են վարկային միջոցներ և վերջինիս ընտանիքի անդամները:</li> <li>(Ընտանիքի անդամ՝ Շահառուի ընտանիքի անդամ հանդիսացող անձինք, որոնք սույն կարգի իմաստով համարվում են Շահառուի հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները),</li> <li>Համավարկառուների քանակը չի կարող գերազանցել 3 անձը,</li> <li>Վարկի սպասարկման ընթացքում հաճախորդի 70 տարեկանը լրանալու դեպքում եթե վարկի մայր գումարի 70% մարված է, ապա հայտը մերժման ենթակա չէ:</li> </ul>
<b>Վարկի արժույթ</b>	ՀՀ դրամ
<b>Մարման եղանակ</b>	Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/
<b>Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/</b>	14%
<b>Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք</b>	0,3 - 6,3% (հաշվի է առնվել տոկոսների սուբսիդավորման դրույքաչափը)
<b>Տոկոսադրույքի սուբսիդավորում</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կազմում է 14%</li> <li>2) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կազմում է 12%</li> <li>3) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կազմում է 11%</li> <li>4) Երևան քաղաքում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կազմում է 9%</li> </ol>
<b>Վարկի ժամկետ</b>	60-84 ամիս
<b>Վարկի արտոնյալ ժամկետ</b>	Սահմանված չէ
<b>Վարկի գումար</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգման դեպքում՝ 300,001-7,000,000 ՀՀ դրամ</li> <li>2. Անհատական բնակելի տների համար՝ 300,001-10,000,000 ՀՀ դրամ</li> </ol>
<b>Ապահովման միջոց</b>	<ul style="list-style-type: none"> <li>300,000-3,000,000 ՀՀ դրամ կազմող վարկերի դեպքում՝ անհրաժեշտ է ընտանիքի անդամի/հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին, կին/երաշխավորություն:</li> <li>3,000,001-7,000,000 ՀՀ դրամ կազմող վարկերի դեպքում, անհրաժեշտ է 2 երաշխավոր, որոնցից միայն 1-ը կարող է հանդիսանալ ընտանիքի անդամ,</li> <li>7,000,000-ից ավել վարկերի դեպքում, որպես վարկի ապահովման միջոց պետք է հանդիսանա՝ -Վերանորոգվող անշարժ գույքը</li> <li>-Լրացուցիչ անշարժ գույք/ըստ անհրաժեշտության/</li> <li>-ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն /ըստ անհրաժեշտության/</li> <li>Գրավի առարկային գնահատումը Գրավի առարկային գնահատումը իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից Վարկ/գրավ հարաբերակցությունը Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի մինչև 70 %-ի չափով:</li> </ul>
<b>Ապահովագրություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ անշարժ գույքի ապահովագրություն</li> <li>Դժբախտ պատահարներից ապահովագրությունը պարտադիր պայման է:</li> <li>! Ապահովագրություն իրականացվում է վարկի մնացորդի չափով հոգուտ Բանկի Վարկի գործողության ողջ ընթացքում</li> </ul>

<b>Եկամուտների պահանջը</b>	<ul style="list-style-type: none"> <li>Առաջնային եկամուտներ (փաստաթղթավորված)՝ հաշվի է առնվում 100%-ի չափով*,</li> <li>Երկրորդային եկամուտներ՝ փաստաթղթերով հիմանվորված եկամուտներ, որոնք հաշվի են առնվում առավելագույնը 60%-ի չափով**,</li> <li>ՕՏԻ գործակիցը պետք է գերազանցի 45%-ը:</li> </ul>
<b>Վարկի վաղաժամկետ մարում</b>	Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի ամբողջական կամ մասնակի մարում Վաղաժամկետ մարման տույժ 2ի կիրառվում
<b>Միջնորդավճարներ և այլ վճարներ</b>	2ի պահանջվում
<b>Վարկի սպասարկման ամսական վճար</b>	2ի պահանջվում
<b>Ժամկետանց մայր գումարի տույժ</b>	0.1% օրական
<b>Ժամկետանց տոկոսագումարի տույժ</b>	0.13% օրական
<b>Վարկառուի/համավարկառուի/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վերջին 12 ամսում(գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի թիվը չպետք է գերազանցի 30 օրը:</li> <li>Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պայմանները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող:</li> <li>Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորության ռիսկի դասը պետք է լինի ստանդարտ դասակարգված:</li> <li>Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող:</li> <li>Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում:</li> </ul>

**Այլ պայմաններ**

1. Էներգաարդյունավետ կհամարվի այն վերանորոգումը, որի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր արժեքից Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների՝ Էներգիայի այլընտրանքային աղբյուրների, օգտագործվող Էներգաարդյունավետ շինարարական նյութերի, Էներգախնայող ջեռուցման համակարգերի, արտաքին դռների և պատուհանների ձեռքբերմանը, տեղադրմանը կամ փոխարինմանը, իսկ անհատական բնակելի տան դեպքում՝ նաև արտաքին պատուղ և պարփակող կոնստրուկցիաների ջերմամեկուսացմանն է ուղղվում՝

ա. Բնակարանների համար՝ առնվազն 40%-ը՝ մինչև 3,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում, իսկ 3,000,000-ից ավել վարկերի դեպքում՝ առնվազն 30%:

բ. Բնակելի տների համար՝ առնվազն 30%-ը՝ 3,000,000 ՀՀ դրամ և ավել վարկի դեպքում:  
 Մեկ բնակարանի (բնակելի տան) համար ծրագրի շրջանակներում իրականացվում է միայն մեկ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում:

2. Էներգաարդյունավետության չափանիշներ.

- Պատերի, տանիքների, միջհարկային ծածկերի ջրամեկուսացում,
- Էներգաարդյունավետ շինարարական նյութերի ձեռքբերում,
- Արտաքին դռների և պատուհանների ձեռքբերում, փոխարինում կամ տեղադրում,
- Ջեռուցման կամ ջրատաքացուցիչ կաթսայի (գազի կամ էլեկտրականության հիմքով) և ջեռուցման համակարգի բաղադրիչների (խողովակներ, սեկցիաներ և այլն) ձեռքբերում, փոխարինում կամ տեղադրում,
- Հովացման համակարգերի, Էներգաարդյունավետ օդափոխիչի, օդորակիչի ձեռքբերում և տեղադրում
- Արևային համակարգերի (ջրատաքացուցիչ, ֆոտովոլտային) ձեռքբերում և տեղադրում,
- Լուսադիոդային լամպերի և լուսատուների ձեռքբերում:

Էներգաառուումն ավետ միջոցառումնեռին նեռնաառուռ տեհնհեռնաեռն եռնառառեռո սահմանում են աամանառում:

3. Վարկի ընդհանուր գումարի ոչ ավելի, քան 10%-ը կարող է ուղղվել կենցաղային տեխնիկայի (առնվազն Էներգախնայողության A+ դասի սառնարան, լվացքի մեքենա, սպասք լվացող մեքենա, էլեկտրական ջեռոց, էլեկտրական սալօջախ, էլեկտրական ջրատաքացուցիչ) ձեռքբերմանը:

4. Դիմում-հայտի մերժում Հաճախորդը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված.

- Վարկարժանության չափանիշներին
- Վճարունակության չափանիշներ
- Վարկունակության չափանիշներին

5. Սուբսիդավորման գումարի տրամադրման վաղաժամկետ դադարեցման հիմքերը.

- Վարկի ամբողջական մարման դեպքում
- Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում
- Վարկառուի կողմից կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում
- Բնակարանի/բնակելի տան վերանորոգման աշխատանքները վարկի տրամադրումից առավելագույնը 12 ամիս հետո ավարտված չլինելու դեպքում,
- Վարկի գործողության ընթացքում Վարկառուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,
- Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակներում մեկից ավելի անգամ օգտվելու նպատակով այլ Կազմակերպությունից վարկ ստանալու դեպքում:
- Այլ հիմքեր համաձայն Ծրագրի իրականացման կարգի

6. Վարկի ծախսային ուղղությունները և դրանց ներկայացվող պահանջները

- Ծրագրի չափանիշներին համապատասխանելու համար իրականացվող բոլոր միջոցառումների առնվազն 80%-ը և էներգաարդյունավետ միջոցառումներին ուղղվող ծախսերի 100%-ը պետք է հիմնավորվեն վճարումը հավաստող փաստաթղթերով (օրինակ՝ վճարման հանձնարարական, ՀԴՄ կտրոն, դրամարկային մուտքի օրդեր, բանկային փոխանցում, ընդունման-հանձնման ակտ): Էներգաարդյունավետ միջոցառումները, որոնց համար չի ներկայացվում վճարումը հավաստող փաստաթուղթ, դիտարկվում են որպես ոչ էներգաարդյունավետ միջոցառումներ:
- Վարկառուի կողմից սույն պայմանների 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերում նշված հիմքերով սուբսիդավորման գումարի տրամադրման դադարեցման դեպքում մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:

Վարկառուի/համավարկառուի առաջնային և երկրորդային եկամուտների դասակարգումը.

\* Որպես առաջնային եկամուտ ընդունվում է.

աշխատանքի վայրից ներկայացված տեղեկանքով հաստատված եկամուտը՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (հիմք է ընդունվում ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ ԱԱՀ նախարարի և ՊԵԿ նախագահի համատեղ հրամանը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին), փաստաթղթավորված շահաբաժիններ, հարկային հաշվետվություններով հիմնավորված բիզնես եկամուտներ,

փաստաթղթերով հիմնավորված եկամուտներ՝ վարձակալությունից ստացված եկամուտները, որոնք ամրագրված են վարձակալության պայմանագրով՝ հաստատված նոտարի կողմից և գրանցված Անշարժ գույքի կադաստրի պետական ոմիտեի կողմից: Կենսաթոշակները և պարբերական բնույթ կրող պետական նպաստները՝ հաստատված լիազոր մարմնից ներկայացված տեղեկանքով:

\*\* Որպես երկրորդային եկամուտ ընդունվում է.

Բանկում ներդրված վաճառային պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարները և վերջին 12 ամիսների ընթացքում պարբերաբար ստացված դրամական փոխանցումներ և նմանատիպ այլ եկամուտներ, որոնք վարկունակության հաշվարկում ներառվում են 60%-ի չափով:

- Մինչև 3,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում եկամուտների վերլուծությունը կատարվում է համապատասխան Ջերմ օջախ վարկատեսակի:
- Մինչև 2010 թվականը կառուցված բնակարանի (բնակելի տան) համար անհրաժեշտ է տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն (ոչ ավելի, քան 10 տարվա վաղեմության)՝ 4-րդ աստիճանի վնասվածություն չունենալու վերաբերյալ (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց ցանկը հրապարակված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքէջում՝ [www.minurban.am](http://www.minurban.am)) կամ գնահատողի որակավորման գործող վկայական ունեցող և լիազոր մարմնի կողմից հաշվառված անձի կողմից տրված գնահատման հաշվետվություն, որը ներառում է գնահատվող գույքի տեխնիկական վիճակի (վնասվածության աստիճանի) վերաբերյալ տեղեկատվություն:

- Վերանորոգման/կահավորման աշխատանքների նախահաշիվը լրացվում է հետևյալ հղմամբ՝ <https://www.nmc.am/hy/ee-tool/ee-tool-renovation> և պետք է ունենա դրական հաստատում:

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

## Ծանոթություն

1. Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով.

- Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
- Իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 – 52,000 ՀՀ դրամ,
- Պայմանագրի նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ,
- Անշարժ գույքի ապահովագրության վճար՝ 0.15% վարկի մնացորդային գումարի չափով,
- Դժբախտ պատահարներից ապահովագրության վճար՝ 0.15% վարկի մնացորդային գումարի չափով,
- Գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:

2. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

3. Վարկը տրամադրվում է անկանխիկ :

4. Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ»

5. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

- Վարկային հայտի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,

6. Վարկի մերժման գործոններն են.

- Վարկառուի և երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

7. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 2 աշխատանքային օրվա ընթացքում և տրամադրում՝ մինչև 4 աշխատանքային օր:

8. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

9. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:

10. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս գրկվի իր սեփական գույքից:

11. Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:
- Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

12. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am), ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

13. ԶԳՈՒՇԱՅՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:

14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՆՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՑԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am):

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՄԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ**